ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ»
փակ բաժնետիրական ընկերություն

Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, 0910, ք. Մեծամոր, հեռ./ֆաքս - (37410) 28 06 69, (37410) 28 85 80, կապի օպերատոր - (37410) 28 98 30, էլ.փոստ - anpp@anpp.am, anpp@haek.am

№ Ε/40/942-26 առ "16 04 2026թ.

Ձեր № ա/հ առ "30" 03 2026թ.

«Նանե Հարությունյան» Ա/Ձ
Ն. Հարությունյանին

(Ծանուցում №ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-45/25-01/277 պայմանագիրը միակողմանի լուծելու մասին)

Հարգելի՛ տիկին Հարությունյան,

«Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության կարիքների համար լաբորատոր ստուգիչ, հսկիչ, չափիչ սարքերի ձեռք բերման նպատակով հրապարակված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-45/25» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում «ՀԱԷԿ» ՓԲԸ և «Նանե Հարությունյան» Ա/Ձ-ի միջև 2025 թվականի նոյեմբերի 20-ին կնքվել է № ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-45/25-01/277 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

Պայմանագրի անբաժան մաս կազմող հավելված 1-ով (տեխնիկական բնութագիր) ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանված «պայմանագիրը կնքելուց հետո 120 օրացուցային օրվա ընթացքում», սակայն մինչ օրս Պայմանագրի հավելված 1-ի թիվ 32, 44 և 51 չափաբաժիններով սահմանված տեխնիկական բնութագրերին համապատասխան ապրանքները Ձեր կողմից մատակարարված չեն:

Հաշվի առնելով Պայմանագրի դրույթները և Ձեր կողմից ստացված գրությունը՝ տեղեկացնում եմ, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն միակողմանի մասնակի լուծում է «ՀԱԷԿ» ՓԲԸ և «Նանե Հարությունյան» Ա/Ձ միջև 2025թ. նոյեմբերի 20-ին կնքված № ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-45/25-01/277 պայմանագիրը թիվ 32, 44 և 51-րդ չափաբաժինների մասով և առաջարկում եմ 5 աշխատանքային օրվա ընթացքում «ՀԱԷԿ» ՓԲ ընկերության «Կոնվերս բանկ» ՓԲԸ 1930000199200100 հաշվեհամարին վճարել պայմանագրի (61 200 ՀՀ դրամ) և որակավորման (91 800 ՀՀ դրամ) ապահովումները:

Հարգանքով՝

ԳՏՏ - ԸՀՏ Ս. Մաթևոսյան

Կատ.
ԳԸԲ գլխավոր մասնագետ –
խմբի ղեկավար
Հռիփսիմե Ռամազյան
Հեռ. 010-20-04-91